Հ.Հ. Արագածոտն մարզի Արայի գյուղի հիմնական դպրոց

«ՇԱԽՄԱՏԸ ՈՐՊԵՍ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ»

Խմբակի ծրագիր

Տարեկա 32 դասաժամ (շաբաթական 1 ժամ)

Մասնակիցներ՝ 2-րդ դասարան

Խմբակի ղեկավար՝ Անի Բաբայան

2023-2024

Ուստարի

Բացատրագիր

Շախմատ խաղալու ուսուցման շուրջ աշխատանքը նպատակաուղղված է ապահովելու մտավոր, ֆիզիկական և երեխաների անհատականության ունակությունների զարգացումը: Դպրոցական տարիքում շախմատային գիտելիքների ուսուցումը նպաստում է երեխաների հետաքրքրությունների զարգացմանը և խթանում է սեր այս խաղի նկատմամբ, ընդլայնում է մտահորիզոնը, սովորեցնում է մտածել, հիշել, համեմատել, ընդհանրացնել, կանխատեսել իրենց գործունեության արդյունքները, զարգացնում է տրամաբանությունը: Ձևավորում է պատկերացում շախմատի՝ որպես մտածողության զարգացման գործիքի մասին:

Նպատակները

- Ուսումնասիրել և վերլուծել երեխաների իմացական կարողությունների և բարոյակամային որակների ձևավորումը շախմատ խաղի միջոցով:
- Նպաստել սովորողների շախմատային գիտելիքների կատարելագործմանը:
- Ձևավորել այլընտրանքային և բազմատարբերակային մտածողություն սովորողների մոտ:
- Ձևավորել խաղը վերլուծելու, սխալները հայտնաբերելու կարողություն:
- Ձևավորել և զարգացնել սովորողների ալգորիթմային և քննադատական մտածողությունը:
- Շախմատի մշակութային և գեղագիտական արժեքի ընկալում:
- Երևակայության զարգացում:
- Ուսումնառության և մոտիվացիայի բարձրացում:

Վերջնարդյունքները

Խմբակի անդամները կկարողանան՝

- Ամրապնդել ստացված գիտելիքները գործնական խաղի միջոցով
- Գիտակցել համագործակցված աշխատանքի կարևորությունը և արժևորել կապը կյանքի հետ:
- Օգտագործել ստացված գիտելիքները գործնականում՝ մասնակցելով դպրոցական խաղերին, տարածաշրջանային և մարզային օլիմպիադաներին:
- Կայացնել ինքնուրույն որոշումներ, վարել ազնիվ, գրագետ խաղ:
- Վերլուծել շախմատային խնդիրները, բաժանել այն մասերի, բացառել սխալ տարբերակները և գտնել ճիշտ պատասխանները:
- Որոնել և գտնել այլընտրանքային ուղիներ՝ կիրառելով մարտավարական հնարքներ: Ստեղծել մարտավարական հնարքներ:
- Ընտրել նպատակներ. գնահատել, պլանավորել դրանք և իրականացնել գործնականում:
- Կանխարգելել հակառակորդի մտահղացումները:
- Մեկնաբանել Տիգրան Պետրոսյանի ռազմավարությունը:

Բովանդակություն

- Ճանոթանալ տարբեր կոմբինացիաների, ծուղակների
- Արագ կողմնորոշվել տարբեր իրավիճակներում
- Գնահատել սեփական դիրքը և մրցակցի դիրքը
- Հասնել նյութական առավելության բաց և կիսաբաց գծերում, թույլ դաշտերում
- Օգտագործել արգելափակում, կիրառել պաշտպանի ոչնչացում, հարձակում
- Գտնել ռազմավարական և մարտավարական հնարքներ և հասնել հաղթանակի
- Տիգրան Պետրոսյան. Աշխարհի 9-րդ չեմպիոնի կյանքը և գործունեությունը

Պահանջվող նյութատեխնիկական բազա

- Շախմատի խաղատախտակներ
- Խաղաքարեր
- Ժամացույցներ

Օգտագործված գրականության ցանկ, Հղումներ

- Ն. Մ. Կալինիչենկո. Շախմատային կոմբինացիաներ, 2004
- Ն. Կալինիչենկո. Շախմատը սկսնակների համար, 2022
- Ն. Կալինիչենկո. Սկզբնախաղեր, 2022
- Ռ. Մեսսա և Ֆ. Մասետտի, 1001 շախմատային խնդիր, 2016
- https://lichess.org/
- https://kznakhimnadram.blogspot.com/search?q=%D5%B7%D5%A1%D5%AD%D5%B4%D5%A1%D5%BF
- https://www.arlis.am/documentview.aspx?docid=174666
- https://escs.am/am/search?q=%D5%AND%D5%B4%D5%A2%D5%A1%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80
- https://arnoldmiqayel.wordpress.com

Ծրագիր/ Թեմատիկ պլանավորում

Հ/Հ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ՆՊԱՏԱԿ	ԺԱՄԱՔԱՆԱԿ	ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ Սովորողը կարողանում է...
1.	Մատային դիրքերի ստեղծում	Սովորողների մոտ ձևավորել մատային դիրքեր ստեղծելու կարողություն	3	Ստեղծել մատային դիրքեր՝ օգտագործելով 3- ից ավելի խաղաքարերեր:
2.	Մատ 1, 2, 3, 4 քայլից. Խնդիրների լուծման տեխնիկա	Ամրապնդել շախ, մատ, պատ, խաղաքարեր թեմաները՝ խնդիրների լուծմամբ	3	Լուծել երկքայլանի խնդիրներ:
3.	Սկզբնախաղի, Միջնախաղի,	Սովորողների մոտ ձևավորել	3	Ներկայացնել և մեկնաբանել

	վերջնախաղի հիմունքները կիրառել խաղում	կարողություններ՝ վարելու գրագետ խաղ, օգտագործելով սկզբնախաղի, միջնախաղի, վերջնախաղի հիմունքները		սկզբնախաղի, միջնախաղի և վերջնախաղի հիմունքները, կիրառել խաղի ժամանակ:
4.	Մարտավարություն Մարտավարական հնարքներ.	Ձևավորել այլընտրանքային և բազմատարբերակային մտածողություն սովորողների մոտ:	3	Գնահատել և վերլուծել դիրքը, որոնել և գտնել այլընտրանքային ուղիներ՝ կիրառելով մարտավարական հնարքներ:
5.	Ռազմավարություն. Իրավիճակի գնահատումը և պլանավորումը կյանքում և շախմատում	Ուսուցանել դիրքի գնահատումը: Ուսուցանել պլանավորման սկզբունքները	3	Գնահատել դիրքը ըստ 4 բաղադրիչների: Պլանավորել խաղը:
6.	Շախմատային մինիատյուրներ Սխալների վերլուծություն և շտկում	Ձևավորել խաղը վերլուծելու, սխալները հայտնաբերելու կարողություն:	3	Վերլուծել խաղը, ներկայացնել սխալները, ներկայացնել սխալներից օգտվելու ուղիները:
7.	Վերջնախաղեր. Ձիավորային, Նավակային, Թեթև	Ձևավորել և զարգացնել սովորողների ալգորիթմային և	3	Գնահատել և վերլուծել դիրքը: Կազմել խաղի պլան իրավիճակին

	խաղաքարերի, Թագուհիների	քննադատական մտածողությունը:		համապատասխան:
8.	Տիգրան Պետրոսյան	Սովորողներին ներկայացնել Տ.Պետրոսյանի յուրահատուկ խաղաոճը:	3	Մեկնաբանել Տիգրան Պետրոսյանի ռազմավարությունը:
9.	Ընթացիկ պլան. «լավ» և «վատ» ձիեր ու փղեր	Ուսուցանել «լավ» և «վատ» խաղաքարերի առանձնահատկությունները:	2	Մեկնաբանել ռազմավարական ծրագրերը, վերլուծել դրանք, ներկայացնել տեսակետներ, հիմնավորել դրանք:
10.	Դիրքերի համեմատում	Ձևավորել մտապահելու կարողություն և մտքում գործողություններ կատարելու կարողություն	2	Գտնել դիրքերի տարբերությունները:
11.	Սկզբնախաղեր	Ուսուցանել տարբեր սկզբնախաղեր, ամրապնդել սկզբնախաղային գիտելիքները:	2	Մեկնաբանել սխալները, գտնել և ցույց տալ լավագույն քայլերը:
12.	Առաջադրանքներ	Փնտրել և գտնել հաղթանակի ուղիներ:	1	Լուծել հանձնարարված առաջադրանքները

13.	Գործնական խաղ	Անցկացնել դաս-մրցույթ:	1	Վարել ազնիվ, գրագետ խաղ՝ կիրառելով խաղը վարելու հմտությունները